

Արմ.

Յ-43652

ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ՈՐՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՅԵՎ ՎՃԱՐՈՒՄ-
ՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ 1938 ԹՎԻՆ



368
Պ-36

Պար. № 15881

368
7-36

ԽՍՀՄ—ՖԺԿ

Պետ. Ապահովագրութեան
Գլխավոր Վարչութիւն

№ 276/139
21 մայիսի 1938 թիւ
Մոսկվա
Վ. Կուլբէշեվի № 9

**ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ՈՐՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՅԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ-
ՄԱՆ ԿԱՐԳԸ 1938 ՅՎԻՆ (1939 թ. ՀԱՄԱՐ)**

«Գլուղական վայրերում և քաղաքներում պարտադիր կոպարային ապահովագրութեան վերաբերյալ» ԽՍՀ Միութեան Ժողկոմխորհի 1934 թ. հուլիսի 19-ի № 1707 վորոշման, ինչպես նաև այս վորոշման նկատմամբ ԽՍՀ Միութեան ԺԿՍ-ի 1936 թ. հուլիսի 14-ի № 1254 և 1937 թ. ոգոստոսի 4-ի № 1288 վորոշումներով կատարած լրացումների ու փոփոխութիւնների հիման վրա, ԽՍՀ Միութեան Ֆինանսների Ժողովրդական կոմիսարիատը՝ ի վերացումն պարտադիր կոպարային ապահովագրութեան վերաբերյալ 1937 թ. հուլիսի 22-ի № 321 հրահանգի, 1938 թ. պարտադիր կոպարային ապահովագրութեան որակիտների հաշվառման արտոնութիւններ տալու և վճարումների հաշվարկման համար սահմանում ե հետեւյալ կարգը՝

**Ի. ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՅԵՆԹԱԿԱ
ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ**

Ա) ԿՈՂՏՆՏԵՍՈՒՅՐՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1. Կոլտնտեսութիւններում պարտադիր կոպարային ապահովագրութեան յենթակա գույքի հաշվառումը կատարում ե յենթաշրջանային ապահովագրական տեսուչը՝ կոլտնտեսութեան նախագահի կամ վարչութեան անդամի ու հաշվետարի հետ միասին՝ Մանրութիւն. — «Ձեռնարկութիւնների, հիմնարկութիւնների և կազմակերպութիւնների գույքի պետական ապահովագրութեան մասին» ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1938 թ. փետրվարի 3-ի № 111 վորոշման հիման վրա՝ գլուղական վայրերում տնայնա-արհեստագործական սկզբնական կազմակերպութիւնների և բոլոր տեղերում հաշմանդամների կոպարացիայի գույքը 1939 թ. հունվարի

Թարգմանությունը խմբագրեց ՄԵԼԻՈՆՅԱՆ
ՌԵԱԵՐԵՆԻԿ ԲԱՐԳՄԱՆԵԳ՝ Ս. ԱՎԵՂՅԱՆ
ՍՐԲԱԳՐԵԳ՝ Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Գլավիտի լիագոր—6637

Սևան-Չանգչինի տպարան, պատվեր № 1. Տիրաժ 500.

768 37 | 787-87 |

1-ից յենթակա չե պարտադիր կոպարային ապահովագրության: Դրա համար ել այդ կոպարային կազմակերպությունների գույքը 1938 թ. յենթակա չե հաշվառման:

2. Կոլտնտեսություններում պարտադիր կոպարային ապահովագրության յենթակա գույքի վերաբերյալ տեղեկություններն ապահովագրական տեսչի կողմից մտցվում ե կոլտնտեսության ապահովագրական քարտի մեջ (ձեւ № 101):

Ապահովագրական քարտերում այս տեղեկությունների գրանցելը կատարվում ե տեղերում՝ յուրաքանչյուր կոլտնտեսության համար առանձին:

3. Արդյունաբերական ձեռնարկություններին, կառուցվածքների, սարքավորման, ինվենտարի և տրանսպորտային միջոցների և այլն արժեքների վերաբերյալ տեղեկությունները (ապահովագրական քարտի 1-ին, 2-րդ և 4-րդ ստորերը), պետք ե վերցնել կոլտնտեսությունների հաշվապահական (ինվենտարային) գրքերից, առ այն որվա դրությամբ, վոր որն ապահովագրական քարտն ե լրացնում:

4. Ապահովագրական քարտի 1-ին ստորում ցույց ե տրվում արդյունաբերական ձեռնարկություններին և արհեստանոցների արժեքը, սարքավորման և նրանց վերաբերող ինվենտարի հետ միասին: Կոլտնտեսությունների, արդյունաբերական ձեռնարկությունների թվին են պատկանում՝ աղացները (յեթե ջրացաց ե՝ ամբարառակներով կամ պաշտպանողական թմբերով), ձավարաղացները, խնոցահարոցները, վուշա-կանեփագման և կանեփահարման ու փայտամշակման, կարի ու այլ արհեստանոցները, հյուսնոցները, դարբնոցները, չորանոցները—ջերմոցով, բեվիկնախիժի (սկիպիդարի), ձյութաթորման, աղյուսի, ածխաայրման, քիրամիզի, փայտասղոցման և այլ ձեռնարկումները:

5. Ապահովագրական քարտի 2-րդ ստորում՝ «այլ շենքեր»—ցույց ե տրվում՝ բնակելի շենքերի, ակուրներին, մուրներին, անասնաբակերին (գոմեր)ախոռների, խոզանոցներին, շտեմարաններին, սրահներին, հրդեհաշիջ սրահներին և այլ շենքերի արժեքը, վորոնք չեն զբաղեցված արդյունաբերական արտադրությամբ:

Բանջարապահեստանոցների, սիլոսային աշտարակների և նման այլ կառուցվածքների արժեքը մտցվում ե ապահովագրական քարտի մեջ առանց այն մասերի, վորոնք վերաբերվում են հողային աշխատանքներին:

6. Ապրանքային—նյութական արժեքներին են վերաբերվում բոլոր մթերքներն ու նյութերը (ինչպես սեփական արտադրության, նույնպես և ձեռք բերված)—դաշտավարական, բանջարանոցային, այգեգործական, մարգարուծական, անասնաբուծության, մեղվաբուծության ու թռչնաբուծության և այլն արտադրանքը կոլտնտեսության արդյունաբերական և անայնագործական ձեռնարկությունների ու արհեստանոցների պատրաստ ու կիսապատրաստ արտադրանքի, հումքի, վառելիքի, անստառնյութերի և այլ պաշարը:

7. Ապրանքային—նյութական արժեքների ապահովագրական գումարը, դաշտավարական, բանջարանոցային, այգեգործական, մարգարուծական արժեքի հետ միասին, (ապահովագրական քարտի 3-րդ ստորը) վորոշում ե՝ արտադրանքի և նյութերի այն արժեքով, վորպիսին արտահայտված ե կոլտնտեսության առ 1-ն հունվարի 1938 թ. հաշվեկշռում (բալանսում):

Արտադրանքի և նյութերի արժեքն առ 1-ն հունվարի 1938 թ. վորոշվում ե կոլտնտեսությունների 1937 թ. հաստատված տարեկան հաշվետվությունների 28-րդ հոդվածի տվյալներով: Դրա համար պետք ե № 3 հաշվով («մթերքներ և նյութեր» № № 15, 16, 17, 18, 19, 19-ա և 20 յենթահաշիվներ) առ 1-ն հունվարի 1938 թ. մնացորդների գումարներին ավելացնել № 37 («Արտադրական ձեռնարկությունների անավարտ արտադրանք») յենթահաշիվով մնացորդի գումարին:

8. Ապահովագրական քարտի 4-րդ ստորում պետք ե մտցնել՝ գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների (ինչպես և տրակտորների), տրանսպորտի միջոցների (ավտոմոբիլներ, սայլեր, սահնակներ և այլն) ինվենտարային արժեքը և մանկապարտեզների ու մուրների, ձաշարանների, ակումբների, խրճիթ-լաբարատորիաների, կոլտնտեսության վարչության գրասենյակի և այլն ինվենտարի արժեքը (բացի արտադրական ձեռնարկությունների ու արհեստանոցների ինվենտարից):

9. Զկնորսական նավերի և վորսի վերաբերյալ գործիքների արժեքի մասին տեղեկությունները պետք ե վերցնել ձկնորսական կոլտնտեսության հաշվապահական (ինվենտարային) գրքերից՝ առ այն որվա դրությամբ, յերբ հաշվառվում ե կատարվում, ըստ վորում ձկնորսական նավերի ապահովագրական գումարը ցույց ե տրվում նրանց իսկական արժեքի լրիվ չափով, իսկ վորսի գործիքներին նկատմամբ՝ նրանց արժեքի 75 տոկոսի չափով:

արժեքի վերաբերյալ տվյալները վերցնելով կոլտնտեսութան հաշվապահական գրքերից:

Ձկնորսական նավերի և վորսի գործիքների վերաբերյալ տեղեկությունները պետք է ցույց տալ ապահովագրական քարտի 1-ին հատվածում՝ «ապահովագրություն կրակից և այլ աղետներից» սողում:

Մանրորսյուն.— Կոլտնտեսությունում նոր ստացված ձկնորսական նավերի և վորսի գործիքների արժեքի հաշվառումն ապահովագրական յենթաշրջանային տեսուչը կատարում է կոլտնտեսության յեռամսյա տվյալների հիման վրա:

10. Անասունների քանակի և տարիքի վերաբերյալ տեղեկությունները պետք է վերցնել կոլտնտեսության տվյալների հիման վրա առ այն որվա գրությունը, վոր ուրը ապահովագրական քարտն է կազմվում: Անասուններին ապահովագրական քարտի մեջ պետք է գրանցել հետևյալ տարիքային խմբավորումներով.

Չիյերը, ուղտերը, ալխանակները, շորիները.

ա) 1-ից մինչև 2 տարեկաններ

բ) 2 տարեկանից բարձրներ,

խակ ցեղական և բարելավված ցեղի տեսակները— նաև 6 ամսականից մինչև մեկ տարեկանները:

Սոռոր յեղջուրավոր անասունները՝

ա) 6 ամսականից մինչև մեկ տարեկանները,

բ) 1 տարեկանից բարձրները:

Սոգերը, վոչխարներն ու այծերը՝ 6 ամսականից բարձրները:

11. Ապահովագրության յենթակա ուղտերի վերաբերյալ տեղեկությունները պետք է մտցնել ապահովագրական քարտի 9, 10, 11 տողերում, իսկ ավանակների վերաբերյալ՝ քարտի 2-րդ հատվածի 12, 13, 14 տողերում:

12. Քարտի «Ֆերմաներում յեղած անասուններ» հատվածում, անասունների քանակի և տարիքի վերաբերյալ տեղեկությունների գրանցման համար հիմք են ծառայում շրջանային հողբաժնի կողմից կոլտնտեսությանը տրված փաստաթղթերը կամ շրջանային հողբաժնի կողմից ապահովագրական տեսչությունը տրված տեղեկանքը կոլտնտեսությունում ֆերմա լինելու մասին:

13. Պետական և շրջանային ցեղային մատյաններում գրանցված ազնվացեղ և բարելավված ցեղային անասունների բոլոր

տեսակների (ձիեր, խոշոր յեղջուրավոր անասուններ, վոչխարներ, այծեր, խոզեր, ուղտեր և այլն) քանակի և ապահովագրական գումարի վերաբերյալ տեղեկությունները պետք է մտցնել ապահովագրական քարտի 2-րդ հատվածի 1 և 6 սյունյակներում, իսկ ֆնացած անասունների քանակի մասին 4 և 9 սյունյակներում:

14. Մեկ տարեկանից բարձր ազնվացեղ և բարելավված ցեղային խոշոր յեղջուրավոր անասունների, ինչպես և յերկու տարեկանից բարձր ազնվացեղ և բարելավված ցեղային ձիերի (2 և 7 սյունյակները) ապահովագրական գումարները վորոշում են ապահովագրական տեսուչն ու կոլտնտեսության նախագահը լրիվ արժեքով և վորպես կանոն՝ զոտեխնիկի (կամ անասնաբուժի, անասնաբուժակի) մասնակցությամբ:

15. Շրջանային հողբաժնի և կոլտնտեսության տվյալների հիման վրա յենթաշրջանային ապահովագրական տեսուչը կազմում է պետական և շրջանային ցեղային մատյաններում գրանցված ազնվացեղ և բարելավված ցեղային անասունների բոլոր տեսակների ցուցակը (ձեյլ № 132): Այս ցուցակի «անասունի գնահատությունը» սյունակում գրանցվում են միայն ազնվացեղ և բարելավված ցեղային խոշոր յեղջուրավոր անասունները (մեկ տարեկանից բարձր) և ձիերը (2 տարեկանից բարձր): Ազնվացեղ և բարելավված ցեղային անասունների քանակի, տարիքի և արժեքի վերաբերյալ տեղեկությունները ձեյլ № 132 ցուցակից փոխանցվում են ապահովագրական քարտի 2-րդ հատվածի համապատասխան սյունյակները:

16. Ազնվացեղ և բարելավված ցեղային անասունների ցուցակը ստորագրում են կոլտնտեսության նախագահը, հաշվետարը և յենթաշրջանային ապահովագրական տեսուչը և կցում կոլտնտեսության ապահովագրական քարտին:

17. Այն կոլտնտեսություններում, վորտեղ կենտրոնացված են մալեյնի և ինֆեկցիոն սակավարյունությունը (անեմիա) հիվանդ ձիերը, ապահովագրվում են այդ տնտեսությունների սպասարկող միայն առողջ ձիերը:

18. Ցանքի տարածության վերաբերյալ տեղեկությունները պետք է վերցնել շրջանային Գործադիր Կոմիտեյի կողմից հաստատված՝ 1938 թ. աշնանացանի և գարնանացանի պլանից և մտցնել կոլտնտեսության ապահովագրական քարտի 3-րդ հատվածի «1» սյունյակը («տարածություն»):

Պտղաբեր առնակերի և նախկին տարիները ցանովի խոտաբույսերի տարածութունների վերաբերյալ տեղեկութունները պետք է մտցնել ապահովագրական քարտի մեջ, այդ ցանքերի և տոռնկերի փաստացի տարածության վերաբերյալ կոլտնտեսության տվյալները հիման վրա:

Ապահովագրական քարտի 24—26 տողերում պետք է մտցնել բոլոր տեսակի տարերային աղետները, վնասատուներից և բուսական մշակույթների հիվանդութուններից տվյալ վայրում ապահովագրվող կուլտուրաների ցանքի պլանով նախատեսված տարածութունները:

19. Զմեռնամուտին ցանած գարնանային կուլտուրաները (արևածողիկ և այլն) կոլտնտեսության ապահովագրական քարտում ցույց են տրվում գարնանացան կուլտուրաներից առանձին (40 տողը): Այդ կուլտուրաների տարածութունները մտցվում են նաև գարնանացան կուլտուրաների գրանցման համար հատկացված համապատասխան տեղերում:

20. Քարտի 27—28 տողերում՝ «հատիկաբույսեր և բակլայաբույսեր» — պետք է գրանցել այդ կուլտուրաների աշնանացանի և գարնանացանի համար շրջանային հողբաժնի կողմից պլանով սահմանված տարածութունները:

Հատիկաբույսերի և բակլայաբույսերի կուլտուրաներին են վերաբերվում՝ հաճարը, ցորենը, բրինձը, կարմրահատը, գարին, յեգիպտացորենը, կորեկը, սորգոն, վոսպը, բակլան, լոբին, սիսիռը վիկան և այլն: Հատիկաբույսերին են վերաբերվում նաև այնպիսիները, վորոնք մշակվում են վորպես հատիկներ՝ մոգար, կունակ, գոմի, չումիզա:

Յեթե միջնամուտին տարածության վրա ցանված է յերկու կուլտուրա, որինակ՝ յերեքնուկ և հաճար, այս դեպքում քարտում գրանցվում է սրանցից միայն մեկը, վորը հանդիսանում է հիմնականը, այսինքն՝ ներկա դեպքում հաճարը («հատիկային») սյունյակում:

21. Գյուղատնտեսական այն կուլտուրաները, վորոնց համար սահմանված են ապահովագրական հատուկ նորմաներ կամ տարիֆային դրույքներ, պետք է հաշվի առնել քարտի առանձին տողերում:

Յեթե վորյեվե կուլտուրայի — որինակ՝ ցորենի կամ բրինձի ապահովագրական նորման ավելի ցածր է կամ բարձր՝ հատիկաբույսերի համար սահմանված նորմաներից, այս դեպքում այդ

կուլտուրան պետք է գրանցել քարտի առանձին ազատ տողում:

22. Պլանով սիրուսացման հատկացված հատիկային կամ այլ կուլտուրաների ցանքի տարածութունները պետք է ցույց տալ քարտի 32-րդ «սիրուսային մշակույթներ» տողում: Հատիկային այն կուլտուրաները, վորոնց ցանված են կանաչ վիճակում հնձելու վորպես խոտ կամ կեր՝ պետք է գրանցել քարտի 30-րդ «ցանովի խոտաբույսեր» տողում:

23. Քարտի 30-րդ տողում պետք է մտցնել տեղեկութուններ ցանած խոտերի վերաբերյալ՝ ներառյալ ցանած սերմացու խոտերը, ինչպես ընթացիկ աարում, նույնպես և անցյալ տարիներում (բացի կարմիր յերեքնուկի սերմանոցից և յենթաշերտային): Նախկին տարիների խոտի ցանքի մասին տեղեկութունները պետք է վերցնել նրանց փաստացի տարածության հիման վրա:

24. Կարմիր յերեքնուկի սերմանոցով զբաղեցրած տարածութունների վերաբերյալ տեղեկութունները պետք է մտցնել քարտի 31-րդ տողում, կարմիր յերեքնուկի սերմանոցների տարածութունները պետք է հաշվել ա) փաստացի տարածութուններով, յեթե սերմանոցի ցանքը կատարված է առանձնացված հատուկ հողամասերի վրա, կամ բ) Շրջգործկոմի նախագահության կողմից հաստատված կոլտնտեսության արտագրական պլանի հիման վրա, յեթե սերմանոցի ցանքերն առանձնացված են ընդհանուր խոտացանքերից:

Յեթե կարմիր յերեքնուկի սերմանոցի ցանքերի տարածութունը ցույց չի տրված կոլտնտեսության արտագրական պլանում, այս դեպքում պետք է վերցնել Շրջգործկոմի նախագահության կողմից գարնան ցանքի պլանը հաստատելիս՝ կոլտնտեսությանը հասցրած սերմանոցի ցանքերի պլանային առաջադրանքների տվյալները:

25. Այն կուլտուրաները, վորոնք ցանվում են կանաչ պարտացման նպատակով, որինակ՝ լյուպինը կամ տվյալ տարում ոգտագործվում են անասունների արածացման համար (արոտային ոգտագործման), նույնպես և բնական մարգագետինների խոտերը, դեկորատիվ և անտառային տնկարանները կոլտնտեսության ապահովագրական քարտի մեջ չեն գրանցվում:

26. Ապահովագրական քարտի 1-ին հատվածի «ապահովագրության 100 ուղբուց վճարի դրույքը» և «ապահովագրական վճարների գումարը» սյունակները, 2-րդ հատվածի 2, 5, 8, 10, 11, 12 սյունակները, 3-րդ հատվածի 2, 3 և 4-րդ սյունակները,

նմանապես և 51—63 տողերը—գրանցվում են ապահովագրական վճարները հաշվարկելու ժամանակ:

27. Կոլտնտեսուծյան ապահովագրական քարտը կազմվում է յերկու որինակ և ստորագրվում են կոլտնտեսուծյան վարչուծյան նախագահը, կոլտնտեսուծյան հաշվետարը և յենթաշրջանային ապահովագրական տեսուչը: Քարտի մեկ որինակը պահվում է շրջանային ապահուծյունում, իսկ մյուս որինակը՝ ապահովագրական վճարները հաշվարկելուց հետո, վճարման ծանուցագրի հետ միասին տրվում է կոլտնտեսուծյանը:

28. Կոլտնտեսուծյան ապահովագրական քարտը կոլտնտեսուծյան վարչուծյան նախագահի և հաշվետարի կողմից ստորագրելուց հետո, չի թույլատրվում վորյեվև ուղղում մտցնելու նրա մեջ: Յեթե հետագայում մինչև ապահովագրական առաջին մուծման ժամկետը կոլտնտեսուծյան ունեցվածքի կազմի մեջ կառաջանան փոփոխուծյուններ՝ կոլտնտեսուծյան մեջ նոր մտած տրնտեսուծյունների գույքի հանրայնացման հետեվանքով, կամ կհայտնաբերվի, վոր քարտը կազմելիս բաց է թողնված կամ թագցված վորյեվև գույք, այդ դեպքում պետք է կազմել լրացուցիչ ապահովագրական քարտ: Ապահովագրական քարտը կազմելուց հետո կոլտնտեսուծյան ունեցվածքի մեջ կատարված այլ փոփոխուծյունները հաշվի չեն առնվում:

29. Պարզելու համար, թե արդյոք կոլտնտեսուծյունն իրավունք ունի ստանալու արտոնուծյուններ, վորոնք նախատեսուծյունում են պաշտտղի կողարային ապահովագրուծյան վերաբերյալ ԽՍՀ Միուծյան Ժողկոմխորհի վորոշմամբ, պարտաղիր կողարային ապահովագրուծյան յենթակա գույքի հաշվառման հետ միասին պետք է քննել և պարզել կոլտնտեսուծյան անասնապահուծյան, հակահրդեհային պաշտպանուծյան և հրաղիմացկուն շինարարուծյան վիճակը:

Ապահովագրված գույքի նկատմամբ այս քննուծյունը կատարում է յենթաշրջանային ապահովագրական տեսուչը՝ կոլտնտեսուծյան վարչուծյան նախագահի կամ վարչուծյան անղամի, գյուղխորհրդի ու շրջանային հողբաժնի (անասնաբուժի կամ անասնաբուժակի, գյուղատնտեսի, զոտեխնիկի) և հրդեհաշիջ հսկողուծյան ներկայացուցիչների հետ միասին:

Քննուծյան արդյունքը գրանցվում է հատուկ ակտի մեջ (ձեղ № 133), վորը կազմվում է յերկու որինակից. այս ակտի

մեկ որինակը տրվում է կոլտնտեսուծյանը, իսկ մյուսը պահվում է շրջանային ապահովագրական տեսուծյունում:

30. Անասնապահուծյան պահպանման և դարգացման լավագույն ցուցանիշներ ունեցող առաջավոր կոլտնտեսուծյուններին, ինչպես և այն կոլտնտեսուծյուններին, վորոնք ունեն հակահրդեհային լավ պաշտպանուծյուն և վորոնք հրաղիմացկուն շենքեր են կառուցում, նրանց տրվում է արտոնուծյուններ՝ շրջանային ապահովագրական հանձնաժողովների վորոշուծյունների հիման վրա, վորոնք պետք է կայացվեն ապահովագրական վճարուծյունների հաշվարկման աղխատանքն ավարտելուց անմիջապես:

Այս հարցերի քննուծյանը մասնակցելու համար, շրջանային ապահովագրական հանձնաժողովի նիստին մասնակից են լինում նաև շրջանային անասնաբուժը, հրդիջ պաշտպանուծյան տեսուչը և շրջանային ապահովագրական տեսուչները:

31. Անասնապահուծյան լավագույն ցուցանիշների համար արտոնուծյուն տրվում է լրիվ չափով, այսինքն 25 տոկոսով միայն այն կոլտնտեսուծյուններին, վորոնց անասուծյուններն իրոք դտնվում են որինակելի վիճակում: Յեթե այս տեսակետից միայն առանձին նվաճուծյուններ են լինում, այս դեպքում արտոնուծյուն կարող է տրվել փոքր չափով (10—15 տոկոս):

Արտոնուծյուն կարող է տրվել նաև ապահովագրված անասուծյունների առանձին տեսակների նկատմամբ. որինակ՝ յեթե լավ է պահվում և ձիշտ խնամք է տարվում միայն խոշոր յեղջյուրավոր անասուծյունների նկատմամբ, իսկ ձիյերի և այլ կենդանիների նկատմամբ կոլտնտեսուծյունը չունի բարձր ցուցանիշներ, այդ դեպքում արտոնուծյունը 25 տոկոսով կամ ավելի փոքր չափով՝ նայած անասուծյունների վիճակին, կարող է տրվել միայն ապահովագրված խոշոր յեղջյուրավոր անասուծյունների նկատմամբ:

32. Հակահրդեհային լավ պաշտպանուծյուն ունեցող կոլտնտեսուծյուններին, ինչպես նաև այն կոլտնտեսուծյուններին, վորոնք կատարել են հրաղիմացկուն կառուցուծյուններ, նրանց կարող են տրվել լրիվ չափով 50 տոկոսով արտոնուծյուններ միայն այն դեպքում, յեթե կոլտնտեսուծյան ունեցվածքը հրդեհի անվտանգուծյան տեսակետից գտնվում է գերադանց վիճակում:

Հակահրդեհային պաշտպանուծյան ցուցանիշները թերի լինելու դեպքում, արտոնուծյունը տրվում է ավելի փոքր չափով՝ նայած հակահրդեհային պաշտպանուծյան և միջոցների վիճակին:

33. Յեթե կոլտնտեսուծյունը (նաև կոլտնտեսականների

տնտեսությունները) տուժում են այնպիսի տարերային աղետներից, վորոնց նկատմամբ տվյալ վայրում ապահովագրություն չի տարվում, արտոնության չափը սահմանվում է շրջանային ապահովաչրական հանձնաժողովի վորոշմամբ՝ յեկնելով տնտեսության հգորությունից ու ֆուսսի չափից: Բայց և այնպես արտոնության այդ գումարը, տվյալ տնտեսության համար հաշվարկված ապահովագրական վճարումների ընդհանուր գումարի 90 տոկոսից չպետք է բարձր լինի:

Այս արտոնությունների համար հիմք պետք է ծառայեն հողբաժինների ու գյուղխորհրդների յեղրակացությունները, նաև տնտեսության վիճակի մասին այլ տվյալներ՝ կապված տարերային աղետի հետ:

Բ) Կոլսնեսսակացների, բանվորների, ծառայողների, մեծատնտես գյուղացիների և այլ քաղաքացիների պատկանող և պարտադիր կոպարային ապահովագրության յենթակա գույքի հաշվառումը կատարվում է յենթաշրջանային ապահովագրական տեսուչը՝ «1938 թ. վճարողների և հարկադրման որյեկտներին հաշվառման ու պարտադիր կոպարային ապահովագրությունն անցկացնելու կարգի մասին» ԽՍՀՄ Ֆինժողկոմատի 1938 թ. մայիսի 8-ի № 250/92 հրամանի համեմատ:

34. Կոլտնտեսականների, բանվորների, ծառայողների, մեծատնտես գյուղացիների և այլ քաղաքացիների պատկանող և պարտադիր կոպարային ապահովագրության յենթակա գույքի հաշվառումը կատարվում է յենթաշրջանային ապահովագրական տեսուչը՝ «1938 թ. վճարողների և հարկադրման որյեկտներին հաշվառման ու պարտադիր կոպարային ապահովագրությունն անցկացնելու կարգի մասին» ԽՍՀՄ Ֆինժողկոմատի 1938 թ. մայիսի 8-ի № 250/92 հրամանի համեմատ:

35. Պարտադիր կոպարային ապահովագրության յենթակա գույքի մասին տեղեկությունները մտցվում են ապահովագրվածների ցուցակում՝ տնտեսությունների հետեվյալ խմբերով՝

- ա) Կոլտնտեսականների տնտեսությունները՝ գյուղական վայրերում (ձև № 102):
- բ) Բանվորների, ծառայողների և կոպերացված տնայնագործների տնտեսությունները՝ գյուղական վայրերում (ձև № 102):
- գ) Մենատնտես գյուղացիների, վոչ կոպերացված տնայնագործների, արհեստավորների և այլ տնտեսությունները՝ գյուղական վայրերում (ձև № 103):
- դ) Բանվորների, ծառայողների, կոպերացված տնայնագործների, կոլտնտեսականների, մենատնտես գյուղացիների և միյուս քաղաքացիների տնտեսությունները՝ քաղաքներում, բանվորական ավաններում և ամառանոցային վայրերում (ձև № 131):

36. Ապահովագրվողների ցուցակները պետք է կազմել յուրաքանչյուր գյուղխորհրդի, քաղաքի, բանվորական ավանի և ամառանոցային վայրի համար ստանձին: Յուրաքանչյուր ցուցակ պետք է ստորագրված լինի ապահովագրական տեսչի կողմից:

37. Արգելվում է ապահովագրվողների ցուցակները կազմել՝ մեխանիկորեն ոգտագործելով տնտեսության գրքերի գրանցումները—առանց նախապես այդպիսիներն ստուգելու և տնտեսատերերին հարցաքննելու:

38. Ապահովագրվողների—(ազգանուն, անուն և հայրանուն) տնտեսությունների մասին տեղեկությունները պետք է մտցնել գյուղավայրերում՝ գյուղխորհրդի տերիտորիայի վրա բնակվող տնտեսությունների ցուցակի հիման վրա (գյուղխորհրդի հաշվառման ձև № 4), իսկ քաղաքատիպ վայրերում՝ ապահովագրվողներ անցած տարվա ցուցակների հիման վրա, այդպիսիներն ստուգելով շրջաֆինբաժնի կամ քաղխորհրդի տվյալների հետ:

39. Գյուղական վայրերում շենքերի ապահովագրական գումարները մտցվում են ապահովագրվողների ցուցակներում՝ ապահովագրական թերթիկների կամ ապահովագրվողների անցած տարվա ցուցակների տվյալներով, յեթե շենքերի արժեքը, վորոնք ցույց են տրված այդ ցուցակներում, չեն յենթարկվել փոփոխության:

Վոչ բնակելի և վոչ վոքի կողմից չպահպանվող շենքերը չեն ապահովագրվում և այդ պատճառով նրանց գնահատման արժեքի մասին տեղեկություններ չեն մտցվում ապահովագրվողների ցուցակի մեջ: Չպահպանվող համարվում են այն շենքերը, վորոնց պահպանումը տիրոջ կողմից չի հանձնարարված տվյալ բնակելի վայրի վորեք բնակչին:

Տիրոջ կամ նրա ընտանիքի անդամների բացակայության դեպքում շենքի պահպանման հանձնարման մասին պետք է գրավոր հայտնվի գյուղխորհրդին:

Ապահովագրական որյեկտերին հաշվառման ժամանակ կազմվում է անբնակելի և վոչ պահպանվող շենքերի ցուցակը: Այդ ստորագրվում է գյուղխորհրդի նախագահի և ապտեսչի կողմից ու պահվում է շրջապտեսչությունում:

40. Նոր առաջացած բակերն ու շենքերը պետք է գնահատվեն յենթաշրջանային ապահովագրական տեսուչների կողմից և գրանցվեն ապահովագրական թերթիկներում: Այդ շենքերի

գնահատութիւնները կատարվում է 1936 թ. ընտուենված գնահատման նորմաներով: Շարքից դուրս յեկած շենքերը պետք է հանել ապահովագրական թերթիկներից: Իսկ քաղաքներում, վորտեղ շենքերի գյուլքագրումը կատարված է կումունալ տնտեսութիւն ըստին կողմից, նոր առաջացած շենքերի արժեքի վերաբերյալ տեղեկութիւնները պետք է վերցնել այդ կումունալ ըստիներից:

41. Քաղաքներում, բանվորական ավաններում և ամառանոցավայրերում, վորտեղ շենքերը գնահատված են կումունալ տնտեսութիւն մարմինների կողմից, 1938 թ. ապահովագրական վճարները պետք է հաշվարկել այն նույն գումարներով, վորով հաշվարկումները կատարվել են 1937 թվականին:

42. Չկնորսական նավերի վերաբերյալ տեղեկութիւնները պետք է վերցնել ձկնորսական հսկողութիւն մարմինների կողմից կատարած հաշվառման տվյալներից:

Չկնորսական նավերի ապահովագրական գումարը հաշվարկվում է նրանց արժեքի 75%-ի չափով:

43. Անասունների քանակի և հասակի վերաբերյալ տեղեկութիւնները ապահովագրվողների ցուցակներում պետք է գրանցել տնտեսատերերի հարցաքննման տվյալների հիման վրա, վերջին դեպքում պետք է ստուգման կարգով ոգտագործել տնտեսութիւն գրքերի գրանցումները:

44. Տնտեսութիւններում յեղած անասունների քանակի և նրանց հասակի վերաբերյալ տվյալները պետք է վորոշել առ այն որվա դրութիւնը՝ վոր որն ապահովագրվողների ցուցակն է կազմվում:

Կոլտնտեսականների տնտեսութիւնների ապահովագրութիւն ցուցակներում պետք է մտցնել ապահովագրութիւն համար սահմանված հասակին հասած բոլոր առկա անասունների վերաբերյալ տեղեկութիւնները:

45. Գյուղատնտեսական կուլտուրաների տարածութիւնների վերաբերյալ տեղեկութիւններն ապահովագրութիւն ցուցակներում գրանցվում են աշնանացանի և գարնանացանի պլանների հիման վրա: Այն գյուղատնտեսական կուլտուրաները, վորոնց համար պլան չի արվում (նույն թվում նաև պտղաբեր տունկերը), նրանց վերաբերյալ տեղեկութիւնները պետք է ցուցակներում գրանցվեն փաստացի ցանված տարածութիւն չափով:

Ցանքի պլանային և փաստացի տարածութիւն պտղաբեր

տունկերի վերաբերյալ տվյալները պետք է վերցնել գյուղխորհրդի գրքերի տնտեսութիւն գրքերից:

46. Յեթե տնտեսութիւն ցանքի վողջ տարածութիւնը 0,1 հեկտարից (1000 քառ. մետր) պակաս է, այդ դեպքում նա չի մտցվում ապահովագրութիւն ցուցակի միջ և չի ապահովագրվում: Այս կանոնը չի տարածվում այն տարածութիւնների վրա, վորոնք զբաղեցված են խաղողի այգիներով, ծխախոտով, մախորկայով և գայլուկով: Այս կուլտուրաները մտցվում են ապահովագրութիւն ցուցակների մեջ նրանց փաստացի տարածութիւնը, անկախ նրա չափից:

47. Տվյալ գյուղխորհրդի ապահովագրութիւն ցուցակները կազմելու հետ միաժամանակ ապահովագրական տեսուչները կազմում են այն ապահովագրվողների ցուցակները, վորոնք իրավունք ունեն ստանալու կոպարային ապահովագրութիւն որինքով սահմանված արտոնութիւնները (ցուցակ ձև № 134): Այս ցուցակի մեջ մտցվում են արտոնութիւն իրավունք ունեցող հետևյալ տնտեսութիւնները՝

ա) ԽՍՀ Միութիւն ժողկոմխորհի կողմից հաստատված պլանով մի վայրից մյուսը վերաբնակված տնտեսութիւնները («գյուղատնտեսութիւն վերաբնակեցման արտոնութիւնների մասին» ԽՍՀՄ ԿԳԿ-ի և ԺԿՍ-ի 1937 թ. նոյեմբերի 17-ի վորոշման համաձայն):

բ) Այն տնտեսութիւնները, վորոնք իրենց կազմի մեջ ունեն Խորհրդային Միութիւն հերոսներ և այնպիսի անձնավորութիւններ, վորոնք պարգեւատրված են ԽՍՀ Միութիւն շքանշանով կամ հեղափոխական պատվո զենքով:

գ) Այն տնտեսութիւններն, վորոնք իրենց կազմի մեջ ունեն պետական համապատասխան մարմիններից թողակ ստացող, աշխատանքի հաշմանդամներ, այդ թվում հաշվելով նաև նրանց, վորոնք ստանում են ծերութիւն թողակ, նմանապես պատերազմի հաշմանդամները:

Յեթե տնտեսութիւնները տուժել են այնպիսի տարերային աղետներից, վորոնց նկատմամբ տվյալ վայրում ապահովագրութիւն չի տարածվում, չեն մտցվում ցուցակ — ձև № 134-ի մեջ: Այդպիսի տնտեսութիւններին արտոնութիւններ արվում են շրջանային ապահովագրական հանձնաժողովների վորոշումով հիման վրա:

48. Տնտեսութիւնները ցուցակ ձև № 134-ում գրանցելու համար պետք է հիմք ծառային համապատասխան փաստաթղթերն ու տեղեկանքները (հաշմանդամութեան մասին պետական մարմինների կողմից տրված թուղթի գրքույկը կամ տեղեկանքը: ՆԳԺԿ վերաբնակեցման կազմակերպութիւնների կողմից տրված վերաբնակեցման տոմսը և այլն):

Ցուցակ ձև № 134-ը ստորագրում է յենթաշրջանային ապահովագրական տեսուչը ստուգում է ապահովագրական ավագ տեսուչը և հաստատում է շրջանային (քաղաքային) ֆինանսական բաժինը:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ, ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ՅԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԾԱՆՈՒՑԱԳՐԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ

Ա) Կոլսնտեսութիւնների գույքի ապահովագրության գծով

49. Կոլտնտեսութիւնների գույքի պարտադիր կոպարային ապահովագրութեան վճարների հաշվարկումը կատարում է յենթաշրջանային ապահովագրական տեսուչը՝ ապահովագրական քարտերում հաշվի առնված գույքի համաձայն:

50. Ապահովագրական վճարները պետք է հաշվարկել կոպարային ապահովագրութեան յենթակա գույքի յուրաքանչյուր տեսակի համար առանձին (շենքեր, խոշոր յեղջուրավոր անասուններ, ձիեր, գյուղատնտեսական կուլտուրաների առանձին տեսակներ և այլն), յեղնելով ապահովագրական գումարից, այն տարիֆային դրույքներով, վորոք սահմանված են տվյալ շրջանի (քաղաքի) համար:

51.—ա) Արդյունաբերական ձեռնարկութիւններն ու արհեստանոցներն իրենց կահավորութեամբ, բ) այլ շենքերի, գ) ապրանքային—նյութեղեն արժեքների, գյուղատնտեսական և այլ ինվենտարի ու տրանսպորտային միջոցների (ապահովագրական քարտի 1-ին հատված) ապահովագրական վճարները հաշվարկվում են հետևյալ կերպ՝ ապահովագրական գումարը պետք է բազմապատկել ապահովագրական գումարի յուրաքանչյուր հարյուր ուրբուր ապահովագրական վճարի տարիֆային դրույքով և արտադրյալը բաժանել 100-ի վրա: Գույքի յուրաքանչյուր տեսակի նկատմամբ այս կարգով հաշվարկված ապահովագրական վճարների գումարը պետք է գրանցել ապահովագրական

քարտի 1-ին հատվածի՝ «ապահովագրական վճարների գումար» սյունյակի մեջ:

Սրա հետ միասին, ապահովագրական տեսուչները պետք է նկատի ունենան, վոր գյուղական վայրերի կոլտնտեսութիւններում գյուղատնտեսական և այլ ինվենտարի ու տրանսպորտային միջոցների ապահովագրութեան համար սահմանված են ապահովագրական վճարների հատուկ (ցածրացրած) դրույքներ:

Որինակներ՝ 1. Կոլտնտեսութեան, այլ շենքերի ապահովագրական գումարը կազմում է 25,640 ու տվյալ վայրում ապահովագրական գումարի յուրաքանչյուր 100 ուրբուր տարիֆային դրույքն է 50 կոպ., ուրեմն ապահովագրական վճարը կկազմի՝

$$\frac{25640 \times 50}{100} = 128 \text{ ուրբ. } 20 \text{ կոպ.}$$

2. Կոլտնտեսութեան գյուղատնտեսական և այլ ինվենտարի և տրանսպորտային միջոցների ապահովագրական գումարը կազմում է 8.400 ուրբ., ապահովագրական այս գումարի յուրաքանչյուր 100 ուրբուր տարիֆային դրույքն է 30 կոպ., ուրեմն՝ ապահովագրական վճարը կկազմի՝

$$\frac{8400 \times 30}{100} = 25 \text{ ուրբ. } 20 \text{ կոպ.}$$

52. Ազնվացեղ և բարեխղճ ցեղային անասունների—ձիերի (2 տարեկանից բարձր) և խոշոր յեղջուրավոր անասունների (մեկ տարեկանից բարձր) ապահովագրական վճարները հաշվարկվում են այս կերպ. ապահովագրական գումարը (քարտի 2-րդ հատվածի 2-րդ և 7-րդ սյունակները) պետք է բազմապատկել ապահովագրական այդ գումարի (սյունյակ 12) 100 ուրբուր վճարի դրույքի վրա և ստացված արտադրյալը բաժանել 100-ի վրա: Այս ձևով հաշվարկված ապահովագրական վճարի գումարը պետք է գրանցել 3 և 8 սյունակներում:

«Ապահովագրական 100 ուրբ. վճարի դրույքը 12 սյունյակում ցույց է տրվում տվյալ վայրի (շրջանի) համար սահմանված տարիֆային դրույքը, առանց կոլտնտեսութեան անասունների պարտադիր կոպարային ապահովագրութեան վճարների արտոնութիւններն ու զեղջեր հաշվելու: Կոլտնտեսութեան անասունների ապահովագրութեամբ կոլտնտեսութեանը տրված արտոնու-

78-727

(143-87)

թյունները ու գեղջերի գումարը հաշվարկվում է առանձին (52 — 56 տողերով):

53. «Վոչ ազնվացեղ անասունի մեկ գլխի ապահովագրության նորման» 11 սյունյակում ցույց է տրվում կենդանիների առանձին տեսակների համար ապահովագրությամբ սահմանված մեկ գլուխ սնասուունի ապահովագրության կայուն նորման: Մրա հետ պետք է նկատի ունենալ, Վոր 1-ից մինչև 2 տարեկան ձիերի, ավանակների և ուղտերի (իսկ ազնվացեղ լինելու դեպքում՝ 6 ամս. մինչև 2 տարեկան) և, 6 ամս. մինչև 1 տարեկան ազնվացեղ և վոչ ազնվացեղ խոշոր յեղջյուրավոր անասունների ապահովագրության նորմաները սահմանված են ավելի ցածր, քան 2 տարեկանից բարձր ձիերի և 1 տարեկանից բարձր խոշոր յեղջյուրավոր անասունների ապահովագրական նորմաներն են:

54. «Այլ» անասունների (վոչ ցեղային) նմանապես վոչ ցեղական խոզերի, վոչխարների և այծերի ապահովագրության վճարները պետք է հաշվարկել այսպես՝ անասունների համապատասխան տեսակի քանակը բազմապատկում են ապահովագրական վճարի վրա սահմանված մեկ գլխի համար:

Անասունի մեկ գլխի ապահովագրական վճարը հաշվարկվում է այսպես՝ անասունի տվյալ տեսակի համար սահմանված ապահովագրական նորման պետք է բազմապատկել համապատասխան տարիֆային դրույթի վրա և ստացած արտադրյալը բաժանել 100-ի վրա:

Որհանգիստ՝ 1. Տվյալ շրջանում կուտնտեսության 2 տարեկանից բարձր ձիերի ապահովագրության նորման սահմանված է 160 ուրբի, իսկ ապահովագրական 100 ուրբ. տարիֆային դրույթն է 4 ուրբի 90 կոպեկ, ուրեմն մեկ գլուխ ձիու ապահովագրության վճարը կկազմի:

$$\frac{160 \times 490}{100} = 7 \text{ ուրբ. } 84 \text{ կոպեկ}$$

2. Մեկ տարեկանից բարձր խոշոր յեղջյուրավոր անասունների ապահովագրության նորման է մեկ գլխի համար 145 ուրբ., իսկ ապահովագրական 100 ուրբ. տարիֆային դրույթն է 2 ո. 35 կոպ., այսպիսով մեկ գլխի ապահովագրական վճարը կկազմի՝

$$\frac{145 \times 235}{100} = 3 \text{ ուրբ. } 41 \text{ կոպեկ:}$$

55. 6 ամսականից մինչև 2 տարեկան ազնվացեղ և բարելավված ցեղային, նաև 1-ից մինչև 2 տարեկան վոչ ցեղային ձիերի, ուղտերի, ավանակների մատղաշները, ինչպես և 6 ամս. մինչև 1 տարեկան ազնվացեղ և վոչ ազնվացեղ խոշոր յեղջյուրավոր անասունների մատղաշները համարվում են ապահովագրված՝ առանց ապահովագրական վճարները գանձելու, ուստի այս անասունների նկատմամբ ապահովագրական վճարները չեն հաշվարկվում:

56. 23 տողով պետք է հաշվել ապահովագրական վճարների գումարներն առանձին՝ բոլոր տեսակի ազնվացեղ ու բարելավված ցեղային անասունների նկատմամբ և առանձին՝ «այլ» անասունների համար, վորոնք գտնվում են ինչպես ֆերմաներում, նույնպես և ֆերմաներից դուրս: Այսինքն՝ վճարների գումարները պետք է հաշվել 3, 5, 8 և 10 սյունակներով առանձին:

57. Յերրորդ հատվածի 2-րդ սյունակում «գյուղատնտեսական կուլտուրաների ապահովագրություն» — պետք է ցույց տալ գյուղատնտեսական կուլտուրաների յուրաքանչյուր տեսակի համար ապահովագրությամբ սահմանված նորմաները (ուրբիներով՝ մեկ հեկտարի նկատմամբ):

Մեկ հեկտարից ապահովագրական վճարների գումարը հաշվարկվում է այս կերպ. պետք է մեկ հեկտարի ապահովագրական նորման բազմապատկել ապահովագրական 100 ո. տարիֆային դրույթի վրա և ստացած արտադրյալը բաժանել 100-ի վրա:

Որհանգիստ՝ 1. Տվյալ վայրում հատիկային կուլտուրաների մեկ հեկտարի ապահովագրության նորման է սահմանված 80 ուրբի, նույն վայրում հատիկային կուլտուրաներն ապահովագրվում են՝ կարկասհարությունից, տարափից, փոթորկից, կրակից, նաև թրջումից, ցրտահարությունից և հեղեղումներից: Ապահովագրական 100 ուրբու տարիֆային դրույթն է՝ պատասխանատվության յերկու տեսակով 4 ո. 50 կոպ. ուրեմն մեկ հեկտարի ապահովագրական վճարը կկազմի՝

$$\frac{80 \times 450}{100} = 3 \text{ ուրբի } 60 \text{ կոպեկ}$$

2. Տվյալ վայրում մեկ հեկտար դեղին ծխախոտի ապահովագրական նորման է — 1200 ուրբի: Կարկասհարումից բերքի

վորակն ընկնելու լրացուցիչ պատասխանատվութեամբ տարիֆային դրույքը կազմում է ապահովագրութեան 100 ուրբուց— 5 ու 80 կոպեկ: Մեկ հեկտարի ապահովագրական վճարը կկազմի՝

$$\frac{1200 \times 580}{100} = 69 \text{ ուրբի } 60 \text{ կոպեկ:}$$

3. Տվյալ վայրում մեկ հեկտար կարտոֆիլի ապահովագրական նորման է 200 ու, իսկ տարիֆային դրույքն է ապահովագրութեան 100 ուրբուց 4 ու 50 կոպ, հետևապես մեկ հեկտարի ապահովագրական վճարը կկազմի՝

$$\frac{200 \times 450}{100} = 9 \text{ ուրբի}$$

Յուրաքանչյուր տնտեսութեան համար գարնանացան և աշնանացան ցանքի ապահովագրական վճարը հաշվարկվում է պլանային տարածութեամբ, իսկ բազմամյա խոտերի ու տունկերի ապահովագրական վճարը՝ հաշվի առնված տարածութեամբ: Պլանից դուրս ցանված ցանքի տարածությունն ապահովագրվում է ձրի:

58. Բոլոր տեսակի տարերային աղետներից՝ հարավային կանեփի ցանքերը, յերաշտից՝ վուշի և կանեփի ցանքերը և յերաշտից, ցրտահարությունից՝ կարմիր յերեքնուկի սերմանոցների ցանքերն ապահովագրելիս, դրանց համար ապահովագրական վճարներ չեն հաշվարկվում: Կտավհատի, կանեփի (բացի հաբավային կանեփից—) և կարմիր յերեքնուկի սերմանոցների ցանքսերի ապահովագրական վճարները հաշվարկվում են որենքով նախատեսված այլ տեսակի պատասխանատվությունների համար (կարկտահարությունից, տարափից, փոթորիկից, թրջուներից և այլն):

59. Կոլտնտեսություններում գյուղատնտեսական կուլտուրաների նկատմամբ կրակից առաջացած վնասների պատասխանատվությունը հանդիսանում է վորպես լրացուցիչ — այդ կուլտուրաների ապահովագրութեան հիմնական տեսակներին (կարկտահարությունից, թրջումից, ցրտահարությունից, բոլոր տեսակի տարերային աղետներից) և վոշ մի լրացուցիչ ապահովագրական վճար այդ պատասխանատվութեան համար չէ գանձվում:

60. Գյուղատնտեսական կուլտուրաների (սյունակ 4-րդ) ապահովագրական վճարների գումարը հաշվարկվում է այս ձևով. մեկ հեկտարի (սյունակ 3-րդ) ապահովագրական վճարը պետք է բազմապատկել գրանցված գյուղատնտեսական կուլտուրաների յուրաքանչյուր տեսակի կամ խմբի տարածութեան վրա (սյունակ 1):

Գյուղատնտեսական կուլտուրաների հաշվարկված ապահովագրական վճարների գումարը պետք է գրանցել 50-րդ տողում:

61. Պարտադիր կոպարային ապահովագրութեան յենթակա բոլոր տեսակի անասունների և գյուղատնտեսական կուլտուրաների ապահովագրական վճարները հաշվարկված գումարը պետք է ցույց տալ 51-րդ տողում (առանց հաշվի առնելու վորեն տոնություն կամ զեղձ):

62. Ֆերմաներում և ֆերմաներից դուրս գտնվող բոլոր տեսակի ազնվացեղ և բարելավված ցեղային անասունների (խոշոր յեղջյուրավոր անասուններ, ձիեր, վոշխարներ, այծեր, խոզեր և այլն) ապահովագրութեան վրա տարածվում է արտոնություն, 20%-ի չափով:

Այս արտոնութեան գումարը հաշվարկելու համար պետք է ապահովագրական քարտի (23-րդ տողում) 2-րդ հատվածի 3 և 8 սյունակների ապահովագրական վճարների գումարներն ավելացնել իրար և վերցնել այս ընդհանուր գումարի 20%-ը:

Ուրիճակ՝ Ֆերմաներում գտնվող բոլոր տեսակի ազնվացեղ և բարելավված ցեղային անասունների ապահովագրական վճարների գումարը կազմում է 840 ու, իսկ ֆերմաներից դուրս գտնվողների նկատմամբ 120 ու, ուրեն՝ ընդամենը 960 ու, վորի արտոնութեան 20%-ը կկազմի՝

$$\frac{960 \times 20}{100} = 192 \text{ ուրբի}$$

Արտոնութեան այս գումարը պետք է ցույց տալ 52 տողում:

63. Այս 20% արտոնությունը տարածվում է ֆերմաներում գտնվող (նույն թվում նաև ձիա ֆերմաները) բոլոր տեսակի անասունների վրա, ինչպես ազնվացեղ ու բարելավված ցեղային, նույնպես և վոշ ցեղային անասունների վրա (տեղական):

Արտոնութեան գումարը հաշվարկելու համար պետք է ապահովագրական քարտի (23-րդ տողի) 2-րդ հատվածի 3 և 5

սյունյակների ապահովագրական վճարների գումարներն ավելացնել իրար և վերցնել այդ ընդհանուր գումարի 20% -ը:

Որինակ՝ Ֆերմաներում գտնվող աղնվացեղ և բարելավված ցեղային անասունների ապահովագրութամբ հաշվարկված ե 840 ուրբլի և այլ անասունների ապահովագրութամբ (վորոնք նույնպես գտնվում են Ֆերմաներում) 280 ուրբլի և յերկուսը միասին՝ 1120 ուրբլի: Այս գումարի 20% -ի չափ արտոնությունը կկազմի՝

$$\frac{1120 \times 20}{100} = 224 \text{ ուրբլի}$$

Այս արտոնությունների գումարը ցույց ե տրվում 53 տողում:

64. Ազնվացեղ և բարելավված ցեղային անասունների, ինչպես և Ֆերմաներում գտնվող անասունների ապահովագրական արտոնությունները տրվում են յենթաշրջանային ապահովագրական տեսուչների կողմից՝ կոլտնտեսությունների ապահովագրական քարտի 2-րդ հատվածի տվյալների հիման վրա—ապահովագրական վճարները հաշվարկելու հետ միաժամանակ:

65. Անասունների պահպանման և զարգացման գործում լավագույն ցուցանիշներ ունեցող առաջավոր կոլտնտեսությունների նկատմամբ արտոնությունների գումարն ապահովագրական տեսուչը հաշվարկում ե շրջանային ապահովագրական հանձնաժողովի վորոշումների հիման վրա և այդ վորոշումներով սահմանված չափերով:

Յեթե անասունների պահպանման և զարգացման լավագույն ցուցանիշներ ունեցող այդ կոլտնտեսությունների արտոնությունները տրվում են՝ շրջանային ապահովագրական հանձնաժողովների վորոշմամբ տվյալ կոլտնտեսության բոլոր տեսակի անասունների նկատմամբ, այս դեպքում արտոնություն գումարը պետք ե հաշվել անասունների ապահովագրության վճարների հաշվարկված ընդհանուր գումարից (23 տողի գումարների ընդհանուր թվից) և ցույց տալ ապահովագրական քարտի 56 տողում:

Իսկ յեթե շրջանային ապահովագրական հանձնաժողովի վորոշմամբ արտոնությունը տրվում ե անասունների միայն առանձին տեսակների նկատմամբ (որինակ միայն խոշոր յեղջուրավոր անասունների կամ միայն վոչխարների և այլն), այս

դեպքում սահմանված չափով (տոկոսով) արտոնության գումարը պետք ե հաշվարկել համապատասխան տեսակների ապահովագրությամբ հաշվարկված վճարների գումարներից, վորոնք ցույց են տված ապահովագրական քարտի 2-րդ հատվածում:

Այսպիսի դեպքերում 54, 55 և 56 տողերում պետք ե ցույց տալ անասունների տեսակը, արտոնության չափը՝ տոկոսներով (որինակ՝ խոշոր յեղջուրավոր անասուն—20%) և արտոնության գումարը (ուրբլիներով և կոպեկներով):

66. Անասունների պահպանման և զարգացման լավագույն ցուցանիշներ ունեցող կոլտնտեսություններին արտոնությունը տրվում ե անկախ այն արտոնություններից, վորոնք սահմանված են աղնվացեղ և բարելավված ցեղային անասունների, ինչպես և Ֆերմաներում գտնվող անասունների ապահովագրությամբ:

Անասունների նկատմամբ բոլոր տեսակի արտոնությունների գումարները պետք ե հաշվարկել անասունների ապահովագրության վճարների սկզբնական հաշվարկված գումարներից:

Որինակ՝ աղնվացեղ և բարելավված ցեղային խոշոր յեղջուրավոր անասունների ապահովագրությամբ, տարիֆային հիմնական դրույքներով հաշվարկված ե ապահովագրական վճար՝ 800 ուրբլի: Շրջանային ապահովագրական հանձնաժողովի վորոշմամբ այդ անասունների նկատմամբ աված ե արտոնություն 20% -ի չափով (անասունների տվյալ տեսակի պահպանման և զարգացման բարձր ցուցանիշների համար)

Այս դեպքում յերկու արտոնությունն ել (յուրաքանչյուրը 20% -ով) պետք ե, թե առաջին և թե յերկրորդ դեպքումն ել հաշվարկել 800 ուրբլի գումարից: Այսինքն՝ աղնվացեղ անասունների ապահովագրությամբ արտոնության գումարը կկազմի 160 ուրբլի և անասունների պահպանման ու զարգացման լավագույն ցուցանիշների համար, նույնպես 160 ուրբլի:

67. Հակահրդեհային լավ պաշտպանություն ունեցող կոլտնտեսություններին, ինչպես և հրադիմացիուն շենքեր կառուցող կոլտնտեսություններին տրվող արտոնությունները հաշվարկում ե ապահովագրական տեսուչը, շրջանային ապահովագրական հանձնաժողովի վորոշումների հիման վրա (այդ վորոշումներից գույքի ապահովագրությամբ հաշվարկված վճարներից, այսինքն՝ ապահովագրական քարտի 5-րդ տողում ցույց տված գումարներից):

Յեթն կոլտնտեսութիւնը (ինչպես և կոլտնտեսականները տնտեսութիւնները) տուժել են այնպիսի տարերային աղետներէից, վորոնք տվյալ վայրում յենթակա չեն ապահովագրման, արտոնութիւնը տրվում է շրջանային ապահովագրական հանձնաժողովի վորոշման հիման վրա: Արտոնութիւնը գումարը հաշվարկվում է տվյալ տնտեսութիւնի ապահովագրական վճարները ընդհանուր գումարից՝ հանած մյուս զեղջերն ու արտոնութիւնները:

68. Վերաբնակիչներից կազմակերպված նոր կոլտնտեսութիւնները, ինչպես և այն կոլտնտեսութիւնները, վորոնք իրենց կազմի մեջ ընդունել են վերաբնակիչների (ըստ վերաբնակեցված տնտեսութիւնների քանակի) ԽՍՀՄ ԿԳԿ-ի ԺԿԽ-ի 1937 թ. նոյեմբերի 17-ի № 115/2043 վորոշման հիման վրա՝ իրենց այդ նորաբնակավայրերում ապահովագրական վճարումներից ազատվում են 2 տարի ժամկետով:

69. Այն կոլտնտեսութիւնները, վորոնք իրենց կազմի մեջ ընդունել են վերաբնակիչներ, նրանց գույքի ապահովագրութեամբ արտոնութիւնների գումարը հաշվարկվում է հետևյալ կերպ՝ կոլտնտեսութիւնի ապահովագրական վճարների ընդհանուր գումարը (առանց արտոնութիւնները հանելու 51 տող) պետք է բաժանել կոլտնտեսութիւնի տնտեսութիւնների ընդհանուր թվի վրա (վերաբնակվողների հետ միասին) և ստացած արտադրյալը բազմապատկել վերաբնակվողների տնտեսութիւնների քանակի վրա: Ստացած թիվը հանդիսանում է արտոնութիւնի գումարը, վորը և պետք է մտցնել ապահովագրական քարտի 58-ի ներքևում գտնվող ազատ սյունյակում (նշելով, վոր արտոնութիւնը տրված է վերաբնակիչներին):

Ուրիճակ՝ Կոլտնտեսութիւնի ապահովագրութեամբ հաշվարկված վճարների գումարն է 1800 ուրբլի: Կոլտնտեսութիւնի կազմի մեջ մտնում են 120 տնտեսութիւն, այդ նույն թվում՝ 14-ը վերաբնակված:

Արտոնութիւնի գումարը կկազմի՝

$$\frac{1800 \times 14}{120} = 210 \text{ ուրբլի:}$$

70. (ՀԽՍՀ-ին չի վերաբերվում):

71. Տարերային աղետների առթիվ կոլտնտեսութիւններին տրվող արտոնութիւնները հաշվարկվում են ապահովագրական

վճարների գումարներից՝ ներառյալ նախորդ տարիների ապառքները: Մնացած բոլոր արտոնութիւնները հաշվարկում են ապահովագրական վճարների նոր հաշվարկվածների գումարներից (ապառքներն ու տույժերը հաշվի չեն առնվում):

72. Կոլտնտեսութիւնը վերապահվող բոլոր արտոնութիւնները պետք է հաշվել և գրանցել 59-րդ տողում:

73. Գանձման յենթակա 1939 թ. ապահովագրական վճարները (տող 63-րդ) հաշվարկելու համար պետք է ապահովագրական վճարների հաշվարկած ընդհանուր գումարից (տող 51) հանել արտոնութիւնների ընդհանուր գումարը (տող 59):

61 տողում պետք է մտցնել կոպարային ապահովագրութիւնի այն վրճարների ընդհանուր գումարը, վորոնք նախորդ տարիներից մնացել են վորպես ապառք, առանց այդ գումարի մեջ մտցնելու տույժերը:

62 տողում պետք է ցույց տալ նախորդ տարիների ապառքի պարտագրած տույժը: Տույժի գումարը հաշվարկվում է՝ ժամկետն անցկացրած յուրաքանչյուր օրվա համար գանձվելիք վճարի 0,05 % -ի չափով: Ապահովագրական քարտի և վճարման ծանուցագրի մեջ տույժի գումարը պետք է հաշվարկված լինի մինչև այն օրը, յերբ վճարման ծանուցագիրն է գրվել:

Գանձման յենթակա ապահովագրական վճարների ընդհանուր գումարը (նոր հաշվարկված վճարները, անցած տարիների ապառքը և ապառքի տույժը) պետք է հաշվել և ցույց տալ 63 տողում:

74. Կոլտնտեսութիւնի ապահովագրական վճարները հաշվարկելուց հետո ապահովագրական քարտը ստորագրում է յենթաշրջանային ապահովագրական տեսուչը: Իսկ ստուգումը կատարում է ապահովագրական ավագ տեսուչը:

Ապահովագրական ծանուցագիրը կազմվում են հաշվարկված ապահովագրական վճարի գումարը ֆինրաժնի վարիչի կողմից հաստատելուց հետո:

Վճարման ծանուցագիրը կոլտնտեսութիւնը ուղարկվում է փոստով՝ պատվիրված առաքումով, կամ հանձնվում է անձամբ՝ տեսչի կամ հարկային գործակալի միջոցով: Վճարման ծանուցագիրը հանձնելիս, նրա արմատի վրա ստորագրում է նա, ով վոր ծանուցագիրն ընդունում է (կոլտնտեսութիւնի վարչութիւնի նախագահը, անդամը կամ հաշվետարը):

75. Անասունների պահպանման և զարգացման գործում

ձեռք բերված լավագույն ցուցանիշները, վերոնշյալ ունեն հակահրդեհային լավ կազմակերպված պաշտպանություն և կառուցել են հրադիմացկուն շենքեր, ինչպես նաև տարերային աղետների հետևանքով տուժած կոլտնտեսություններին առանձին դեպքերում արտոնություն կարող են տրվել ապահովագրական վճարները հաշվարկելուց և ծանուցագրերը հանձնելուց հետո ևս, բայց վոչ ուշ, քան 1938 թ. սեպտեմբերի 15-ից:

Այդպիսի դեպքերում նախորդ ծանուցագրերի փոխարեն պետք է կազմել վճարման նոր ծանուցագրեր:

76. Յեթե մենատնտեսները կոլտնտեսություն են մտնում մինչ ապահովագրական վճարումների գանձման առաջին ժամկետը, այդ դեպքում նոր ընդունված կոլտնտեսականների հանրացված գույքի նկատմամբ պետք է կազմել կոլտնտեսության լրացուցիչ ապահովագրական քարտ և այդ գույքի ապահովագրական վճարումների հաշվարկում կատարել կոլտնտեսությունների համար սահմանված աստիճային դրույքներով: Այդ դեպքում պետք է կազմել վճարման լրացուցիչ ծանուցագրեր նույն համարով ավելացնելով (լիտր), ինչպիսի № նա ունի հիմնական վճարման ծանուցագրերում (որինակ՝ 38ա, 75-ա և այլն):

Բ. ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ, ԲԱՆՎՈՐՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ, ՄԵՆԱՏՆՏԵՍ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՅԵՎ ԱՅԼ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

77. Կոլտնտեսականների, բանվորների, ծառայողների, մենատնտես գյուղացիների և այլ քաղաքացիների տնտեսությունների ապահովագրական վճարները պետք է հաշվարկել ապահովագրվողների ցուցակով հաշվառված գույքի հիման վրա:

78. Շենքերի ապահովագրական վճարների հաշվարկման կարգը հետևյալն է՝ նրանց գնահատությունը (ապահովագրության գումարը) պետք է բազմապատկել ապահովագրական գումարի 100 ուրբուռ տարիֆային դրույքի վրա և արտադրյալը բաժանել 100-ի վրա:

Որինակ՝ Տվյալ տնտեսության մեջ շենքի գնահատությունն է 1300 ու: Ապահովագրության 100 ուրբուռ տարիֆային դրույքն է 70 կոպ. այս դեպքում ապահովագրական վճարի գումարը կը կազմի՝

$$\frac{1300 \times 70}{100} = 9 \text{ ուրբ. } 10 \text{ կոպեկ}$$

79. Անասունների ապահովագրական վճարները պետք է հաշվարկել այս ձևով՝ հաշվառման յեթարկված անասունների յուրաքանչյուր տեսակի քանակը պետք է բազմապատկել նույն տեսակի մեկ գլուխ անասունի ապահովագրական վճարի վրա:

Անասունների տվյալ տեսակի մեկ գլխի ապահովագրական վճարի գումարը հաշվարկելու համար պետք է ապահովագրական կայուն նորման բազմապատկել ապահովագրական գումարի 100 ուրբուռ վճարի տարիֆային դրույքի վրա և արտադրյալը բաժանել 100-ի վրա:

Որինակ՝ 1. Տվյալ շրջանում կոլտնտեսականների տնտեսությունների 1 տարեկանից բարձր խոշոր յեղջյուրավոր անասունի ապահովագրական նորման է 140 ուրբուռ, իսկ ապահովագրական գումարի 100 ուրբուռ տարիֆային դրույքն է, որինակ՝ 4 ու. 35 կոպ., ուրբեմն, տվյալ անասունի ապահովագրական վճարը կկազմի՝

$$\frac{140 \times 435}{100} = 6 \text{ ուրբուռ } 09 \text{ կոպեկ}$$

2. Տվյալ վայրում մենատնտեսների տնտեսություններում 2 տարեկանից բարձր ձիերի համար ապահովագրական նորման յե սահմանված 140 ու. տարիֆային դրույքն է՝ ապահովագրական գումարի 100 ուրբուռ, որինակ՝ 9 ու. 90 կոպեկ: Այս դեպքում մեկ գլխի ապահովագրական վճարը կկազմի՝

$$\frac{140 \times 990}{100} = 13 \text{ ու. } 86 \text{ կոպեկ}$$

80. Խոշոր յեղջյուրավոր անասունների 6 ամսականից մինչև մեկ տարեկան մատղաշները և ձիերի, ուղտերի, ջորիների, ավանակների ու յեղջերուների մեկից մինչև յերկու տարեկան մատղաշները համարվում են ապահովագրված, բայց դրանց նըկատմամբ ապահովագրական վճարը չի դանձվում, հետևապես դրանց ապահովագրական վճարները չեն հաշվարկվում:

81. Գյուղատնտեսակուս կուլտուրաների ապահովագրական վճարները հաշվարկելիս, պետք է յուրաքանչյուր տեսակ կուլտուրայի (կամ մի խումբ կուլտուրաների, վերոնց համար սահմանված են ինքնուրույն ապահովագրական նորմաներ, կամ ապահովագրական վճարների դրույքներ) մեկ հեկտարի ապահո-

վագրական վճարի գումարը բազմապատկել տվյալ կուլտուրայի հեկտարների քանակի հետ:

Գյուղատնտեսական կուլտուրաների մեկ հեկտարի ապահովագրական վճարի գումարը հաշվարկելիս, պետք է տվյալ տեսակի կուլտուրայի համար սահմանված ապահովագրական նորման բազմապատկել տարրիֆային դրույքի վրա և ստացած արտադրյալը բաժանել 100-ի վրա:

Որինքով՝ Կոլտնտեսականների տնտեսությունների այգիների մեկ հեկտարի ապահովագրական նորման տվյալ վայրում սահմանված է 625 ուրբլի այդ նույն վայրում այգիների բերքն ապահովագրվում է կարկտահարությունից, տարափից, ցրտահարությունից, փթումից, թրջումից, հեղեղումից և փոթորկից: Ապահովագրական գումարի 100 ուրբլու տարրիֆային դրույքն է, որին ահ՝ 9 ու 30 կոպ., ուրեմն, մեկ հեկտարի ապահովագրական վճարը կկազմի՝

$$\frac{625 \times 930}{100} = 58 \text{ ու } 13 \text{ կոպեկ}$$

Յեթե տվյալ տնտեսությունում պտղաբեր այգու զբաղեցրած տարածությունը հաշվառման տվյալներով 0,12 հեկտար է, այդ պայմանում այգու այդ տարածության ապահովագրական վճարը կկազմի՝ $625 \times 0,12 = 76$ կոպ.

82. Հարավային կանեփի ցանքերը՝ բոլոր տարերային աղետներից, կտավհատն ու կանեփը՝ յերաշտից և կարմիր յերեքնուկի սերմանոցները յերաշտից և ցրտահարությունից—ապահովագրության վճարները չեն հաշվարկում:

Կտավհատի, կանեփի և կարմիր յերեքնուկի սերմանոցների ապահովագրական վճարները հաշվարկվում են՝ պատասխանատվության համար որեւէ սահմանված այլ տեսակներով (կարկտահարություն, տարափ, փոթորիկ և այլն):

83. Հաշվակված և ապահովագրվողների ցուցակի համապատասխան սյունյակներում գրանցված վճարները պետք է գումարել (ապահովագրության բոլոր որչեկտներին նկատմամբ) և նրանց ընդհանուր գումարը գրանցել՝ «ընդամենը հաշվարկված են ապահովագրական վճարները» սյունյակում:

84. Բանվորներին, ծառայողներին և կոոպերացված տնայնագործներին պատկանող շենքերի, անասունների և գյուղատնտեսական կուլտուրաների ցանքերի ապահովագրության դեպքում պետք է կիրառել՝ կոլտնտեսականների համար սահմանված վճարների դրույքները, իսկ վոչ կոոպերացված տնայնագործներին, արհեստավորներին և այլ քաղաքացիներին նկատմամբ պետք է կիրառել մենատնտես գյուղացիների համար սահմանված դրույքները:

85. Կոլտնտեսականների տնտեսությունների (գույքի չըհանրայնացած մասով), նույնպես և աշխատավորական մենատնտեսությունների և բանվորների, ծառայողների ու այլ աշխատավորների տնտեսությունների կազմի մեջ կան Սորհրդային Միության հերոսներ, կամ ԽՍՀ Միության շքանշաններով կամ հեղափոխական պատվո զենքով պարգևատրված անձնավորություններ, նույնպես և պատերազմի ու աշխատանքի հաջմանդամներ՝ այդպիսի տնտեսությունների նկատմամբ ապահովագրական վճարները հաշվարկելիս, արվում են արտոնություններ՝ շրջանային (քաղաքային) ֆինբաժինների վարիչների կողմից հաստատված № 134 ցուցակների հիման վրա: Արտոնությունների գումարը պետք է նշել՝ «Այլ արտոնություններ» սյունյակում:

Այս արտոնությունների գումարները պետք է հաշվարկել միայն ապահովագրական վճարների նոր հաշվարկված գումարներից: Այս դեպքում ապառքներն ու տույժերը հաշվի չեն առնվում:

86: Ապահովագրվողների ձև № 102 ցուցակների 59 սյունյակում և ձև № 103 և 131 ցուցակների համապատասխան սյունյակներում պետք է նշել ԽՍՀՄ ԿԳԿ-ի և ԺԿՍ-ի 1937 թ. նոյեմբերի 17-ի վորոշումով սահմանված արտոնությունների գումարները, այն կոլտնտեսականների, մենատնտեսների և այլ աշխատավորների նկատմամբ, վորոնք վերաբնակվել են տվյալ կոլտնտեսություններում այլ վայրերից՝ ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից հաստատված պլանի հիման վրա:

Այդ նույն սյունյակում պետք է նշել նաև քոչվորական և կիսաքոչվորական շրջանների կոլտնտեսականների և աշխատավորական մենատնտեսների տնտեսությունների համար սահմանված արտոնությունները:

Մանքոսթրոն.—Նկատի ունենալով, վոր հատուկ սյունյակ է հատկացրված այդ արտոնությունների համար, անհրաժեշտ է սյունյակ 59-ում առանձին ցույց տալ այդ արտոնության գումարները:

87. Ապառքատերերի հատուկ ցուցակների հիման՝ վրա «Անցած տարիների ապառքներ» սյունյակում պետք է մտցնել տվյալ տնտեսության կողմից անցյալ տարիներում չմուծած վճարների գումարները՝ առանց տույժերի:

Անցած տարիների ապառքները պետք է ցույց տալ առանձին սյունյակով: Մահմանված չափերով տույժերի գումարները ապահովագրվողների ցուցակներում և վճարման ծանուցագրերում գրանցելիս, հաշվարկումը պետք է կատարել վճարների մուծման ժամկետը խախտելու ու ամբողջ ժամանակի համար—առ ծանուցագրերը գրելու որը:

88. Մուծումների ժամկետները (ցուցակ № 102-ից 65—66 և այլ սյունյակները) պետք է սահմանել միայն 1939 թ. ապահովագրական վճարների նկատմամբ (ընթացիկ տարվա դրույքը): Ապառքների և տույժերի գումարները մուծելու համար ժամկետների չեն բաժանվում:

89. Յենթաշրջանային տեսուչների կազմած ապահովագրվողների ցուցակները ապահովագրական ավագ տեսուչների կողմից ստուգելուց և շրջանային ֆինբաժնի վարիչի կողմից այդպիսիները հաստատելուց հետո միայն՝ յուրաքանչյուր ապահովագրվողի համար դուրս է գրվում վճարման ծանուցագիր:

Կոլտնտեսականների, մենատնտես գյուղացիների և այլ քաղաքացիների տնտեսությունների ապահովագրական վճարների հաշվարկած գումարները պետք է (վճարման ծանուցագրի բլանկի հակառակ յերեսի վրա) գրանցված լինեն ապահովագրության յենթակա գույքի առանձին տեսակներով:

90. Գյուղական վայրերում վճարման ծանուցագրերը ֆինբաժնիների հարկային գործակալների կողմից ապահովագրվողներին հանձնվում են ստորագրությամբ՝ ծանուցագրի արմատի վրա: Անբնակելի, բայց պահպանվող շենքերի ապահովագրության վճարման ծանուցագրերը գրվում են դրանց տերերի անունով և հանձնվում են այն անձնավորություններին, վոչոնք իրենց վրա յեն վերցրել դրանց պաշտպանությունը (շենքի հրահրությունը):

Քաղաքային վայրերում վճարման ծանուցագրերը պետք է ուղարկել փոստով—պատվիրված նամակով, կամ հանձնել անձամբ՝ ստորագրել տալով ծանուցագրի արմատի վրա:

Յեթե վճարման ծանուցագիրն ուղարկվում է փոստով՝ պատվիրված նամակով, այդ դեպքում ծանուցագրի արմատի վրա պետք է ցույց տալ փոստային անդորրագրի համարն ու ամսաթիվը:

ՎՃԱՐԾԱՆ ԾԱՆՈՒՑԱԳՐԵՐԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ ՊԵՏԲ Ե ՊԱՀԵԼ ՊԵՏԱՊԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ (ՔԱՂԱՔԱՅԻՆ) ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԽԻՍՏ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՀԱՎԱՍԱՐ

91. Այն թուր դեպքերում, յերբ կհայտնաբերվեն հաշվառումից բաց թողնված կամ թաքցրած ապահովագրական ուղյակներ կամ՝ արտոնությունները կտրվեն ծանուցագրերը հանձնելուց հետո, տվյալ տնտեսության համար պետք է դուրս գրել վճարման նոր ծանուցագիր:

Ապահովագրական լրացուցիչ վճարներով հասանելիք գումարը պետք է մուծվեն 15 որվա ընթացքում՝ յեթե հիմնական վճարների մուծման համար սահմանված ժամկետներն անցել են:

ԽՍՀՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՈՄԻՍԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ (Գ. ՇԱՏԱԼՈՎ)

ԽՍՀՄ ՊԵՏԱՊԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
Պ Ե Տ՝ (Ա. ՎԼԱՍՈՎ)



320

43. 919

3-4

ПОРЯДОК ПРОВЕДЕНИЯ
учета объектов и исчисления платежей
обязательного окладного страхования
в 1938 году.

А. 1938г.
Лит. № 109
Вкл.